ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 հուլիսի 2017 թվականի N 144-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանարապետության օրենքի 7-րդ հոդվածի և Հայաստանի Հանարապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասի, 1.12-րդ կետի «բ» ենթակետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան և Աբովյան համայնքների մի խումբ բնակիչների դիմումները՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել՝ Ալվինա Մելքոնյանին 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, Նելլի Խաչատրյանին 60 000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, Արևհատ Վարդանյանին 25 000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ, Ռոման Մկրտչյանին 20 000 (քսան հազար) ՀՀ դրամ և Գոհար Պողոսյանին 15 000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանարապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստին՝ հինգ աշխատանքային օրյա ժամկետում ապահովել գումարի վճարումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Գ. ԳՈՒԼՈՅԱՆ

2017 թվականի հուլիսի 07
ք. Հրազդան

Հավելված
ՀՀ կոտայքի մարզպետի
2017 թվականի հուլիսի 07-ի N 144-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Ալվինա Մելքոնյան	ք. Հրազդան, Երևանյան խճուղի, 90 բնակարան	15 000	
2	Նելլի Խաչատրյան	ք. Հրազդան, Միկրոշրջան, 216 շենք, 35 բնակարան	60 000	
3	Արևհատ Վարդանյան	ք. Հրազդան, Նարեկացու փողոց, 21 բնակարան	25 000	
4	Ռոման Մկրտչյան	ք. Հրազդան, Բաֆֆու փողոց, 64 բնակարան	20 000	
5	Գոհար Պողոսյան	ք. Աբովյան, 17 շենք, 67 բնակարան	15 000	